ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. մարտի 9-15-ը ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոնի (CCAMTAC) կողմից Ալմաթիում կազմակերպված «Հարկային քաղաքականություն. սկզբունքներ և պրակտիկա)» թեմայով դասընթացին մասնակցելու նպատակով գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

1) Արսեն Արզումանյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկային վարչարարության կազմակերպման, դիտարկման և հսկողության վարչության պետի տեղակալ,

2) Լուսինե Սարգսյան, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության հարկերի և պարտադիր վճարների մեթոդաբանության թիվ 2 բաժնի գլխավոր հարկային տեսուչ:

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղազախստանի Հանրապետություն՝ քաղաք Ալմաթի, 2025թ. մարտի 9-15-ը:

3. Հրավիրող կողմը՝

ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոն (CCAMTAC):

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր ուսումնասիրել հարկային քաղաքականության սկզբունքները և պրակտիկան՝ մասնավորապես կազմակերպությունների շահութահարկի, ֆիզիկական անձանց եկամտահարկի, վաճառքի հարկերի և բնական ռեսուրսների հարկերի վերաբերյալ:

Աշխատաժողովին մասնակցող տարածաշրջանային երկրների օրինակներով ներկայացվել են առանձին հարկատեսակների մասով հարկային կարգավորումները, դրանց փոփոխությունները և հարկային եկամուտների վրա ազդեցությունը:

Հանդիպման աշխատանքային լեզուն անգլերենն էր՝ ռուսերեն թարգմանությամբ:

5. Քննարկված թեմաները՝

Աշխատաժողովի շրջանակներում մանրամասն քննարկվել են հետևյալ թեմաները՝

1) հարկային քաղաքականության սահմանումները և խնդիրները (հարկային քաղաքականության մշակման հիմնական դժվարությունները),

2) հարկման նպատակները, սկզբունքները,

3) հարկային քաղաքականության մշակման գործնական հարցերը,

4) բնական ռեսուրսների հարկումը, արդյունահանող ճյուղերի համար հարկային ռեժիմների մոդելավորում,

5) ֆիզիկական անձանց եկամտահարկի գնահատում, վերլուծության գործիքների կիրառում,

6) սպառման հարկերի կառուցվածքը, տեսակները, ԱԱՀ-ի և ակցիզային հարկի կառուցման սկզբունքները,

7) ԱԱՀ-ի բարեփոխումների գնահատման մոդելի կիրառում,

8) կազմակերպությունների շահութահարկի կառուցվածքը և կիրառման պրակտիկան:

Մասնակցություն ենք ունեցել ազգային օրենսդրության մասով կազմակերպված քննարկումներին, ներկայացրել դիտարկումներ հարցուպատասխանի միջոցով:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԱՄՀ փորձագետների կողմից ներկայացվեցին կազմակերպությունների շահութահարկի, ֆիզիկական անձանց եկամտահարկի, վաճառքի հարկերի և բնական ռեսուրսների հարկերի վերաբերյալ կարգավորումները, քննարկվեցին դասընթացի մասնակից երկրներում առկա կարգավորումները: Գործնական աշխատանքների միջոցով վերլուծվեցին հարկային փոփոխությունների ազդեցությունը հարկային եկամուտների վրա:

Ելույթներ ունեցան Ղրղզստանի, Ուզբեկստանի, Վրաստանի, Տաջիկստանի ներկայացուցիչները՝ ամփոփ ներկայացնելով իրենց երկրներում հարկային համակարգը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Դասընթացի ավարտին ԱՄՀ Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի կարողությունների զարգացման տարածաշրջանային կենտրոնի (CCAMTAC) կողմից մասնակիցներն արժանացել են հավաստագրերի՝ «Հարկային քաղաքականություն.

սկզբունքներ և պրակտիկա» թեմայով դասընթացը հաջողությամբ ավարտելու կապակցությամբ:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Միջոցառմանը մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ՊԵԿ ներկայացուցիչներին տեղեկատվություն ստանալ միջազգային պրակտիկայում (այդ թվում՝ մասնակից երկրներում) կազմակերպությունների շահութահարկի, ֆիզիկական անձանց եկամտահարկի, վաճառքի հարկերի և բնական ռեսուրսների հարկերի մասով հարկային քաղաքականության սկզբունքների վերաբերյալ, ինչպես նաև գործնական աշխատանքների միջոցով վերլուծվեցին հարկային փոփոխությունների ազդեցությունը հարկային եկամուտների վրա:

Վերոնշյալ գիտելիքների ձեռքբերումը, այլ երկրների հետ փորձի փոխանակումը կնպաստի ՊԵԿ գործառույթների շրջանակներում աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Արսեն Արզումանյան՝

Լուսինե Սարգսյան՝

19.03.2025թ.